

ԿԱԹՈՒԼԻԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

— Ուտրեխտում հին կաթոլիկական ձևով և լատին լեզուով կատարուել է Մարիավիտների առաջին եպիսկոպոսի ձեռնադրութիւնը: Հին կաթոլիկական ձեռնադրութիւնը այն տարբերութիւնը ունի, որ ձեռնադրութեանը մասնակցող իւրաքանչիւր եպիսկոպոս առանձին է ձեռք դնում ձեռնադրւողի վերայ ու ասում. «ան Հոգին Սուրբ»:

Հռովմէական—կաթոլիկների եկեղեցուց անջատուած Մարիավիտների կեանքի մէջ տեղի ունեցած այս դէպքը միայն մարիավիտութեան համար չէ, որ կարող է կարևոր հետեանքներ ունենալ: Վերջին ժամանակները մարիավիտները հոգևորականութեան պակասութիւն էին զգում, 200 հազար աշխարհականները, որ բաժանուած էին 67 ծուխի, ունէին միայն 32 քահանայ, և հռովմէական—կաթոլիկները յոյս էին տածում թէ նրանց մահուամբ մարիավիտութիւնը զրկուելով աստուածաշտութիւնից ու խորհուրդներից, ինքն իրան կանհետայ, որովհետև նրանք եպիսկոպոս չունէին, որ նոր քահանաներ ձեռնադրէր: Բայց մարիավիտները յարաբերութեան մէջ մտան հին—կաթոլիկների հետ, որոնց եպիսկոպոսները, գլուխ ունենալով Ուտրեխտի արքեպիսկոպոս Հերարդ Գուլին, մարիավիտների քահանայ Եան Կովալսկուն ձեռնադրեցին եպիսկոպոս: Այժմ Մարիավիտները հոգևորականների պակասութիւն էլ չեն ունենայ: Կովալսկին դառնում է մարիավիտների իերարխիայի հիմնադիրը: Յիրաւի, նոր եպիսկոպոսը, կամ, ինչպէս Ուտրեխտի ձեռնադրութեան գործողութիւնն է յայտնում, Լեհաստանի, Լիտուի և Ռուսաստանի մարիավիտ կաթոլիկական եկեղեցու եպիսկոպոս Եան Կովալսկին վերադառնալով դէպի իւր հօտը, արդէն թեկնածուների մի ամբողջ խումբ կսեօնդ (լեհական քահանայ) է ձեռնադրել:

Անկասկած, այս դէպքը յոգուտ մարիավիտութեան ահագին շարժում և հին—կաթոլիկների մէջ սաստիկ մոռւանդութիւն առաջ կը բերի: Մարիավիտների յարա-

քերութիւնը հին—կաթոլիկների հետ կարող է ազդեցութիւն ունենալ հին կաթոլիկութեան՝ ռուս պրաւօսլաւ եկեղեցու հետ յարաբերութեան խնդրի վերայ էլ։ Հին կաթոլիկական խնդիրը դառնում է ռուս պրաւօսլաւ եկեղեցու ներքին գործ։

—Հռովմի կոնսիստորիական ժողովը պապի կարգադրութեամբ բանադրել է Իտալիայի Ադրիա քաղաքը և նրա—արուարձանները, երկու շաբաթ արգելելով հրապարակական ժամառացութիւնը, զանգահարութիւնը, պատարագը, հրապարակական ծիսակատարութիւնները հանդիսաւոր թաղումները ևն. թոյլատրւում է միայն նորածինների մկրտութիւնը, թաղումն և պսակը, և այն ևս առանց հանդիսաւորութեան։

Այս բանադրանքի պատճառը քաղաքացիների թըշնամական ցոյցն է եղել իրանց եպիսկոպոսի դէմ։ Եպիսկոպոսանիստ, անունով միայն, Ադրիան է համարւում, բայց եպիսկոպոսները Բովիգոյումն են ապրում։ Վերջին ժամանակներս ցանկութիւն եղաւ եպիսկոպոսարանը տեղափոխել Բովիգօ. և երբ այս պատճառով եպիսկոպոսը Ադրիա եկաւ, ամբօրը հանդիպեց նրան աղաղակներով, շուտցնելով, և դէպի նա քարեր նետելով։ Եպիսկոպոսը գլխին ծանր վէրք ստացաւ։

—Բելգիայի կրօնական կենդրոն Մալին փոքրիկ քաղաքում սեպտեմբերին տեղի ունեցաւ բելգիական կաթոլիկների ժողովը, տօնելու կաթոլիկ կուսակցութեան, իշխանութեան մէջ լինելու, 25 ամեակը։

Արտաքուստ լաւ կազմակերպուած ժողովը յիշեցնում էր գերման կաթոլիկների նման ժողովները այն տարբերութեամբ, որ երբ վերջիններս տքնում էին ցոյց տալ իրանց միութիւնն ու ոյժը, բելգիական կաթոլիկները հարկադրուած չէին ապացուցանելու իրանց իրաւունքները իշխանութիւնը իրանց ձեռքում պահելու, նրանք տօնում էին և առաջ էին բերում երկրում իրանց երկարամեայ իշխանութեան արդիւնքը. Բելգիայում կաթոլիկութեան քաղաքական կարեւորութեան գործնական ա-

պացոյցն էր օրէնսդիր և կատարող իշխանութիւնների ներկայացուցիչների եռանդուն մասնակցութիւնը ժողովին: Ժողովում նախագահում էին դեպուտատների պալատի և սենատի նախագահները, իսկ առաջին նախարարը նստել էր պատուաւոր նախագահ կարգինալ Մերսիէի մօտ:

Ճառախօսների թւում կային և նախարարներ, ժողովը բացուեց կարգինալ Մերսիէի ճառով, որը ամենից առաջ հրաւիրեց ներկայ եղողներին ձայնակցել «կաթօլիկական» ողջոյնին. «Փառք Յիսուսի Քրիստոսին», և բացաւ անշուքեանը «կեցցէ պապը, կեցցէ Պիոս Ժ, «vive le papa, vive Pie X». Մասնակցողները մօտ 5 հազար հոգի էին: Ժողովի հինգ բաժանմունքներում կարգացուել են մինչև 500 զեկուցումներ, զանազան խնդիրների մասին, որոնք վերաբերում են կրօնին, բարոյականութեան, բարեգործութեան, տնտեսական հասարակական դրութեան, մամուլին, գիտութեան, գեղարուեստին, գրականութեան, ևլն: Ընդհանուր ժողովներում խօսում էին այն յառաջադիմութեան վերայ որ արել է Բելգիան քառօրդ դարում. և երկրի բարգաւաճումն վերագրում էին կաթօլիկների իմաստուն կառավարութեան միասիրտ գործունէութեանը: Չանազան անձինք զանազան կենսական խնդիրների մասին խօսեցին. իսկ Լօրենց Եանսենսը՝ քրիստոնէական գեղարուեստի մասին: Հանդէսները վերջացան փառահեղ թափօրով, որին մասնակցում էին 70 հազար հոգի եկած յատկապէս պետութեան զանազան կողմերից դրօշակներով և խաչվառներով:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

— Վիսրադենում օգոստոսի վերջին տեղի ունեցաւ գերման պատօրների ընկերակցութեան ժողովը: Ընկերակցութեան պրուսական ներկայացուցիչների ժողովում սկզբում կարգացուեցին զեկուցումներ հոգեւորականութեանը օգնելու համար դրամագլուխ կաղմելու, և եկեղեցական բարեգործութիւնը կարգաւորելու մասին,